Հովհաննես Թումանյան

Տպավորություններ

Հա՛, կյանքում ես միշտ այսպես եմ եղել,
Խնդացող տխուր, սրտաբեկ ուրախ.
Հազիվ ուզել եմ անհոգ ծիծաղել
Եվ սրտիս խորքից հառաչել եմ «ա՜խ»:

Գարնան երկինք է իմ դժբախտ հոգին
Մերթ մութ ամպամած, մերթ մեղմ ու պայծառ,
Եվ տարերքների ուժով ահագին
Շափառուկները ճընշում են իրար:

Իմ հոգին էլ այն երկնքի նման,

Որ ծավալվում է ձեր գլխի վերև,
Ձեզ անհայտ, գաղտնի տեսնում է շատ բան
Եվ մոտ, և հեռու, և փայլուն, և սև:

Շեշտակի թափով, բուռն ու մոլեգին
Ամենայն կողմից ցոլանում, հոսում,

Լցվում են նրանք իմ անտակ հոգին
Եվ ալեկոծում, չարչարում, հուզում:

Ես հազար աչքով բաներ եմ տեսնում,
Որ թաքնված են լռության ետև,
Հազար ականջով ձայներ եմ լսում,

Որ դեռ սրտերում շշուկ են թեթև:

Եվ ամեն կողմից ձայներ ու ձայներ,
Քնքուշ, կատաղի, թախծալի, զվարթ...
Եվ ես ընկնում եմ, համբառնում եմ վեր,
Անզուսպ մոլեգնում կամ ծփում հանդարտ:

Լրբենի մի ձայն, և ինչպես մրրիկ
Վազում է արյունս իմ երակներում,
Պայթում է սիրտս, և օձի նման
Բարձրանում եմ ես, թշշում, գալարվում:

Մի ձայն էլ ահա, տկար, խղճալի...

Եվ ես փոխվում եմ նորից ու նորից,
Ա՜հ, աստվա՜ծ, աստվա՜ծ, իմ փոքրկալի
Հոգին տանջվում է այսքան ձայներից:

1897